



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

- ԱՄԿԳՈՒԹԵԱՆ ՏԻՏՐՈՍ՝ Տ. ԱՎԵՏԻՍ ԲՅՆՅ. ԹՈՐՈՍՅԱՆԻ

Ս. Ճննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Կիրակի, 9 Յունուարին, առաւօտեան ժամը 11-ին, Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի Լաս Վեկասի Ս. Կարապետ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, ընդառաջելով Առաջնորդ Սրբազան Հօր եւ թեմիս կրօնական ժողովի խնդրանքին, Աւագութեան պատիւ եւ տիտղոս շնորհած է եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Աւետիս Բիւյ. Թորոսեանին, առ ի գնահատանք Արժանթինի Թեմին եւ Արեւմտեան մեր Թեմին մէջ իր երկարամեայ ծառայութեան՝ ի սպաս Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ եւ մեր պատուական ժողովուրդին:

Առ այդ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ, աւագութեան պատիւ պիտի շնորհէ, օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ եւ ջրօրհնէք պիտի կատարէ: Ս. Խորանին պիտի սպասարկէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Աւետիս Բիւյ. Թորոսեան:

Պատարագէն ետք, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ՀՕՄ-ի «Շուշի» մասնաճիւղին կազմակերպած սիրոյ սեղանին:

PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AT ST. GARABED CHURCH OF LAS VEGAS

- REV. FR. AVEDIS TOROSSIAN TO BE HONORED WITH THE TITLE OF
ARCHPRIEST

On Sunday, January 9th, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will visit Las Vegas to celebrate the Nativity and Theophany of our Lord Jesus Christ with the St. Garabed parish community.

The Prelate will celebrate Divine Liturgy, deliver the sermon, and conduct the blessing of water. Parish Pastor Rev. Fr. Avedis Torossian will assist at the altar.

By the request of the Prelate and the Religious Council, H.H. Catholicos Aram I has honored Fr. Avedis with the title of Archpriest for his years-long service to the Armenian Church. Thus, during the Liturgy, the Prelate will bestow upon Fr. Avedis the title of Archpriest.

Following the service, the Prelate will attend a Christmas luncheon organized by the ARS "Shoushi" Chapter.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐբԱՉԱՆ ՀԱՅՐԸ ՑԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ
ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՑԱՅՏՆԵ ԴԸՊՏԻՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴ Տ.
ՍՐԱՊԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ**

Ինչպես ծանօթ է, Ամանորի գիշերը, Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքին մէջ, Ղըպտիներու մէկ եկեղեցին թիրախ դարձաւ ոճրային ռմբահարումի մը, որ պատճառեց անելի քան 20 զոհ եւ շուրջ 100 վիրաւոր:

Առաջնորդ Սրբազանը, 2 Յունուարին, կապի մէջ մտաւ Ղըպտի Ուղղափառ Համայնքի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Առաջնորդ Գերշ. Տ. Սրապիոն Եպիսկոպոսին հետ եւ յանուն Թեմիս հոգեւորականաց Դասուն, ժողովականութեան ու հաւատացեալներուն, ցաւակցութիւն յայտնեց անմեղ զոհերուն համար:

Առաջնորդ Սրբազանը նաեւ զօրակցութիւն յայտնեց զոհերուն ընտանեկան պարագաներուն, աղօթելով, որ բարձրեալն Աստուած անոնց շնորհէ Ս. Հոգւոյ մխիթարութիւնը: Կիրակի օր, ան նաեւ յատուկ աղօթք բարձրացուց զոհերուն հոգիներուն համար:

Յայտնենք նաեւ, որ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, Ղըպտիներու Շնուտա Գ. Պապին ուղղուած նամակով մը, դատապարտած էր ահաւոր արարքը, ցաւակցութիւն յայտնած էր զոհերուն ու վիրաւորներուն համար ու վեր առած՝ Միջին Արեւելքի մէջ իսլամ-քրիստոնեայ դարաւոր խաղաղ համակեցութիւնը եւ զայն պահպանելու անհրաժեշտութիւնը:

**PRELATE EXPRESSES CONDOLENCES TO THE COPTIC
COMMUNITY FOLLOWING THE NEW YEAR'S DAY CHURCH
BOMBING IN EGYPT**

On New Year's day, a bomb exploded in front of a Coptic Church in Alexandria, Egypt, as worshippers were celebrating Mass, killing over 20 people and wounding nearly 100.

The following day, the Prelate was in contact with H.G. Bishop Serapion, head of the Coptic Church in the Western United States, to express

condolences on behalf of Prelacy clergy and faithful. During Divine Liturgy on Sunday, the Prelate offered prayers for the victims and their families.

H.H. Catholicos Aram I released a statement denouncing the attack and expressed his condolences to H.H. Pope Shenouda III.

«ՉՈՒԱՐԹՆՈՑ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻ 20-ԱՄԵԱԿԻՆ

Կիրակի, երեկոյեան ժամը 7-ին, Տէր եւ Տիկին Վարդան եւ Արմինէ Աղաճանեաններու, Հայ Պարարուեստի Կեդրոնի «Չուարթնոց» պարախումբին 20-ամեակի տօնակատարութիւնը տեղի պիտի ունենայ Լոս Անճելըսի Orpheum թատերասրահին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Հոգ. Ս. Պարթէ Վրդ. Կիլիւմեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի ընթերցէ Առաջնորդ Սրբազան Հօր Օրհնութեան Գիրը: Ներկայ պիտի ըլլայ նաեւ Արժ. Ս. Արտակ Քիւյ. Տէմիրճեան:

ZVARTNOTS DANCE ENSEMBLE 20TH ANNIVERSARY CELEBRATION

On Sunday, January 9th, the 20th anniversary celebration of the Zvartnots Dance Ensemble will take place at the Orpheum Theatre in Los Angeles.

Very Rev. Fr. Barthev Gulumian will represent the Prelate and also read the Prelate's letter of blessing. Rev. Fr. Ardak Demirjian will also be in attendance.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ Հ.Ս.Ը.Ս.Ի ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԽՐԱԽՃԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻՆ

Նոր Տարուան եւ Ս. Ծնունդի գոյգ տօներուն առիթով, Հ.Ս.Ը.Ս.-ի Շրջանային Վարչութիւնը կազմակերպած էր խրախճանք մը, որ տեղի ունեցաւ Երեքշաբթի, 4 Յունուարի երեկոյեան, Հ.Ս.Ը.Ս.-ի նոր կեդրոնի «Գեորգ Անտոնեան» սրահին մէջ:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ եղաւ տարուան առաջին այս ձեռնարկին, իր գնահատանքն ու օրհնութիւնները փոխանցեց Հ.Ս.Ը.Ս.-ի մեծ ընտանիքին, շնորհաւորեց Նոր Տարին եւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Ծննդեան սուրբ խորհուրդով անոնց մաղթեց առողջութիւն եւ բարի ծրագիրներու յաջողութիւն:

PRELATE ATTENDS HOMENETMEN NEW YEAR AND CHRISTMAS RECEPTION

On Tuesday, January 4th, the Regional Executive of Homenetmen had organized a New Year and Christmas reception at the new center's "Kevork Andonian" Hall.

The Prelate attended and conveyed his commendation, blessings, and New Year and Christmas wishes to the organizers and attendees.
